

բաց էր, շարունակ կը լսէինք թքի շչալու, սուլելու ձայնն:

Մեր աչքը բացած՝ արշալուսի մի հետք և նշոյլ տեսնալու հետաքրքիր էինք, յերգրկալի փոքրիկ ծակտիկներէն ներս թափանցած էր աւետաբեր արշալոյսի ճառագայթներէն մին, տանը մէջ լսուեցաւ «ինչ անուշ օր մէ յէս օր»:

Դուրսը ամեն բան կերպարանափոխուած է, կապոյտ երկինքը պարզ, հողմն դադրած, մշուշ ու մարախուղ բարձուած, նախորդ աւուր մտատանջութիւնը մոռացութեան տրուած:

Այսօր այգպէս անցուցինք, երեկոյեան դէմ մասնաւոր բուք ունեցանք:

Մենք Յունւարի մէջ ունեցանք դատիկ, պատահեցաւ լաւ կերպով անցուցինք, նաև պատահեցաւ որ պատարագի երես անգամ չը տեսանք:

Ունեցանք նաև հարսանիքներ և պատահեցաւ որ առանց եկեղեցի տանելու թունդրայ վերան պսակեցինք, և կամ օղին առատօրէն խմելով մեր սովորութեանց ամեն սարքն կատարեցիք: առ ոչինչ համարելով ցուրտն և բուքն:

Մտանք Փետրուարն, որ տեղացիք Հուստ կամ Հուստ կասեն. թէև այս ամսոյ մէջ ևս կը շարունակուի ցուրտն ու բուքն նախորդ ամսոց նման, սակայն այս անգամ արեգակն զօրացած լինելով՝ «անուշ» օրերու մէջ ազդելով ձեան խաւերու վերայ, կըսկսի կակղացնել, Այսպէս արեգակն յաղթանակն օր ըստ օրէ ակն յայտնի կերևի:

Այս անգամ հեռու գիւղերն պարզ կերևին, ճանապարհներու վրայ երթեկուծութիւնը շարունակուած է. թէև ճանապարհներն չեն երևիր, սակայն երթեկուծ մարդիկ մի ուղղութեան վերայ շարուած կը գան կամ կը գնան:

Չմոռանանք ասելու՝ որ պարզ օրերու մէջ երբ դաշտի երեսի վերայ բարակ մշուշը պատած լինի, այնպէս որ դաշտն մի քիչ կապտագոյն կերպարանք մի ստանայ, հեռուն ևս

---

1. «Բագրեւանդայ հարսանիքը» անուն գրուածք մի ունիմ, որ առանձին հատոր մի պիտի կազմէ, ուր կը պարունակին հարսանեկան քաղմածիւ սովորութիւններ, հարսի եւ փեսայի վարմունքը, եւ իւրեանց ծնողաց միմեանց հետ ունեցած յարաբերութիւնը եւն եւն: